ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 04/2020

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 30-ը նոյեմբերի 2020 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով հարուցված թիվ **Վ-04/2020** վարույթի նյութերը

պարզեց.

I. Գործի նախապատմությունը

1. 2020 թվականի հուլիսի 28-ին Հանձնաժողով է ստացվել «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության լրագրող Դիանա Ղազարյանի (այսուհետ՝ Դիմումատու) դիմումը այն մասին, որ ՀՀ առողջապահության նախարարությունը, Արսեն Թորոսյանի նախարար դառնալուց հետո, 2018-2020 թվականների ընթացքում՝ «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության հետ կնքել է ընդհանուր մեկ հարյուր քսանչորս միլիոն (124,000,000) ՀՀ դրամ արժողությամբ վճարովի ծառայությունների մատուցման 5 պայմանագիր: Հիմնադրման օրվանից մինչև 2016 թվականի հունվարի 20-ը «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության տնօրեն է հանդիսացել Արսեն Թորոսյանը, որից հետո մինչև 2017 թվականի հունվարի 10-ը՝ վերջինիս կինը՝ Վարդանուշ Թևանյանը, այնուհետև մինչև 2018 թվականի մայիսի 29-ը՝ կրկին Արսեն Թորոսյանը: Վերջինիս կողմից նախարարի պաշտոնը ստանձնելուց հետո «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության տնօրեն կրկին նշանակվել է Վարդանուշ Թևանյանը, ով պաշտոնավարում է մինչ օրս: Դիմումատուն խնդրել է կատարել ուսումնասիրություն և պարզել, թե արդյոք ստեղծված իրավիճակում առկա է շահերի բախում, թե՝ ոչ:

2. 2020 թվականի հուլիսի 31-ին Հանձնաժողովը ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի կողմից Հանրային ծառայության մասին օրենքով սահմանված շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով հարուցել է թիվ Վ-04/2020 վարույթը:

3. 2020 թվականի օգոստոսի 04-ին Հանձնաժողովը վարույթ հարուցելու որոշումն ուղարկել է Արսեն Թորոսյանին:

4. 2020 թվականի օգոստոսի 07-ին Հանձնաժողովը «ՄԻԲՍ» ՍՊ ընկերությունից պահանջել է ներկայացնել քննարկվող հարցին առնչվող տեղեկատվություն:

5. 2020 թվականի օգոստոսի 17-ին «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ պարզաբանումը՝

Ընկերությունը գրանցվել է 2011 թվականին, որի հիմնադիրներն են **ՌԴ քաղաքացիներ Ա.Ստոլպները, Վ.Եկիմովը և Ն.Բերեզինան**: Ընկերությունը ռուսաստանյան հանրաճանաչ կազմակերպության ցանցի մեջ մտնող բժշկական հաստատություններից է (Медицинский институт имени Березна Сергея (МИБС)): Ընկերությունն առաջինն է Հայաստանում սկսել իրականացնել բարձրադաշտ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ սկսած 2012 թվականից: Ընկերության մասնակիցներն ընկերությունում գործում են անձամբ, առանց ներկայացուցիչների, նրանց կազմը հիմնադրումից ի վեր չի փոխվել: Ընկերության շահույթը բաշխվել է մասնակիցների միջև:

Ընկերության տնօրենի աշխատավարձի ամսական դրույքը, ինչպես նաև պարգևավճարների չափը փոփոխվել են 2018-2020 թվականների ընթացքում, ինչը հիմնված է ընկերության նախորդ տարում **արձանագրած արդյունքների ամփոփման վրա**: Տնօրեն Վարդանուշ Թևանյանը չի ստացել աշխատավարձի բարձրացում, հավելավճար, պարգևավճար, այլ շահույթ կամ օգուտ՝ պայմանավորված ՀՀ Առողջապահության նախարարության հետ պայմանագրերի կնքմամբ:

Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Արմենակյան փողոցի 228 հասցեն ընկերության իրավաբանական հասցեն է, որը ֆիքսվել է պետական ռեգիստրում գրանցման պահին, սակայն նշված հասցեում ընկերությունը երբևէ գործունեություն չի ծավալել և այդ հասցեում անշարժ գույք չի վարձակալել: Ընկերության գործունեության հասցեն է ք.Երևան, Բագրատունյաց 1: Ընկերությունը վարձակալության պայմանագրի հիման վրա այդ տարածքը վարձակալում է «ԼԵԲԵՆ» ՍՊԸ-ից:

2011 թվականից 2020 թվականը ներառյալ «ՄԻԲՍ» ՍՊ ընկերությունը բացի ՀՀ առողջապահության նախարարությունից ծառայությունների մատուցման պայմանագրեր է կնքել նաև Երևան համայնքի հետ:

6. 2020 թվականի սեպտեմբերի 08-ին Հանձնաժողովը քննարկվող հարցին առնչվող փաստաթղթեր և տեղեկատվություն է պահանջել ՀՀ առողջապահության նախարարությունից:

7. 2020 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել են պահանջված փաստաթղթերը և տեղեկատվությունը, մասնավորապես՝

1) 2019 թվականի հունվարի 29-ի ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-486 պայմանագիրը, որի սկզբնական արժեքը կազմել է 57,037.6 հազ. ՀՀ դրամ: Պայմանագրային գումարը տարվա ընթացքում փոփոխվել է՝ հիմք ընդունելով 2019 թվականի ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-486 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համապատասխան համաձայնագրերը՝ 2019 թվականի հուլիսի 12-ի N486-1 համաձայնագրով պայմանագրի գումարը դարձել է 86,934.5 հազար ՀՀ դրամ, 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N486-2 համաձայնագրով՝ 96,934.5 հազար ՀՀ դրամ, 2019 թվականի նոյեմբերի 21-ի N486-3 համաձայնագրով՝ 98,934.5 հազար ՀՀ դրամ:

2) 2020 թվականի հունվարի 16-ի ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-486 պայմանագիրը, որի պայմանագրային գումարը տարեսկզբին կազմել է 66,576.0 հազար ՀՀ դրամ: Պայմանագրային գումարը տարվա ընթացքում փոփոխվել է՝ հիմք ընդունելով 2020 թվականի ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-486 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համապատասխան համաձայնագրերը՝ 2020 թվականի մարտի 23-ի N486-1 համաձայնագրով պայմանագրի գումարը դարձել է 67,986.0 հազար ՀՀ դրամ, 2020 թվականի հունիսի 22-ի N486-2 համաձայնագրով՝ 76,639.29 հազար ՀՀ դրամ, 2020 թվականի օգոստոսի 3-ի 486-3 համաձայնագրով՝ 79,639.29 հազար ՀՀ դրամ:

3) Ներկայացվել է սուբսիդիայի տրամադրման համար հիմք հանդիսացող առողջապահության նախարարի 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 1253-Ա հրամանի պատճենը: Սուբսիդիայի տրամադրման պայմանագրի կնքման համար գնման գործընթաց չի նախատեսվում, այն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին առողջապահության համակարգին միացման վճարները փոխհատուցելու նպատակով տրամադրվում է առողջապահության նախարարի հրամանի հիման վրա՝ համաձայն հրամանով հաստատված համամասնությունների:

4) Ներկայացվել են ՀՀ առողջապահության նախարարության և «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության միջև կնքված բոլոր պայմանագրերի արժեքները, որոնք ներկայացվում են ստորև.

«ՄԻԲՍ» ՍՊԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ՀՀ ԴՐԱՄՈՎ		
Տարեթիվ	Տարեսկզբի պայմանագրային գումար	Տարվա վերջի պայմանագրային գումար
2011	-	-
2012	-	-
2013	-	-
2014	20,000,000	-

2015	22,483,800	34,138,400
2016	22,483,800	28,310,100
2017	-	-
2018	22,722,900	25,176,300
2019	57,037,600	98,934,500
2020	66,576,000	79,639,290

5) 2011-2013 թվականներին առողջապահության նախարարության և «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության միջև պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրեր չեն կնքվել:

6) **2017 թվականին պետական պատվեր տեղադրելու վերաբերյալ»** թիվ 642-Ա հրամանով՝ հաշվի առնելով պետական պատվեր տեղադրող հանձնաժողովի համապատասխան որոշումը «ՄԻԲՍ» ՍՊ ընկերությունը չի ներառվել հայտին բավարարող ընկերությունների ցանկում:

7) 2018 թվականից մինչև 15.07.2020թ. ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի N 1166-Ն որոշման ուժի մեջ մտնելը ՀՀ առողջապահության նախարարությունում գնման ընթացակարգը կազմակերպվել է **ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետով և ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման 2-րդ հավելվածի 10-րդ կետով**:

8. **2020 թվականի հոկտեմբերի 19-ին Հանձնաժողովը ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջել է հավելյալ տեղեկատվություն և փաստաթղթեր:**

9. **2020 թվականի հոկտեմբերի 28-ին ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել է հետևյալ տեղեկատվությունը.**

1) ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կազմակերպությունների պայմանագրային գումարները հիվանդանոցային բժշկական օգնության մասով նույն կազմակերպությունների՝ հաջորդող տարիների, ինչպես նաև նախորդ տարվա ընթացքում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցած կազմակերպությունների պայմանագրային գումարները հաշվարկվում են նախորդ տարում փաստացի ֆինանսավորված գումարի, գների բարձրացման և դեպքերի ավելացման նպատակով նախատեսված գումարի հանրագումարով, ընդ որում՝

✓ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման գների բարձրացման

նպատակով նախատեսված լրացուցիչ գումարները կազմակերպություններին բաշխվում են դեպքերի **քանակի համար և գների աճով՝ հաշվարկված գումարի համամասնությամբ,**

✓ հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման դեպքերի ավելացման նպատակով նախատեսված լրացուցիչ գումարները կազմակերպություններին բաշխվում են տվյալ կարգի V գլխում սահմանված կարգով:

2) 2014-2016 թվականներին «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության կողմից մատուցվել են հետևյալ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները՝ համակարգչային տոմոգրաֆիա, միջուկամագնիսային-ռեզոնանսային տոմոգրաֆիա: Նույն տեսակի ծառայություններ 2018-2020 թվականներին են մատուցվել նաև հետևյալ կազմակերպությունների կողմից՝

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏՈՄՈԳՐԱՖԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՄԱԳՆԻՍԱ ՏՈՄՈԳՐԱՖԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
2018 ԹՎԱԿԱՆ	**2018 ԹՎԱԿԱՆ**
1) Իզմիրլյան 2) Արաբկիր Բժշկական Համալիր ԵԴԱԻ ՍՊԸ 3) Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ 4) Սլավմեդ ՍՊԸ 5) Մեդլայն կլինիկ ՍՊԸ 6) Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ 7) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ 8) Դիագնոստիկա բժշկական միավորում ԲԲԸ 9) Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ 10) Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն 11) Ուլտրաիմիջինգ գիտամեթոդական կենտրոն ՍՊԸ 12) Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ 13) Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ 14) Արմամաքս ՍՊԸ 15) ԻռՎինգ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) 16) Շենգավիթ բժշկական կենտրոն ՓԲԸ 17) Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն ՓԲԸ 18) Վարդանանց նորարարական բժշկության կենտրոն **19) «ՄԻԲՍ»ՍՊԸ**	1) Իզմիրլյան 2) Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ 3) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ 4) Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ 5) Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն 6) Ուլտրաիմիջինգ գիտամեթոդական կենտրոն ՍՊԸ 7) Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ 8) Վ. Ավագյանի անվան բժշկական կենտրոն ՍՊԸ 9) Արմամաքս ՍՊԸ 10) ԻռՎինգ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) 11) Նոր շունչ ՍՊԸ **12) ՄԻԲՍ ՍՊԸ** 13) ՄՌՏ էքսպերտ անդրկովկաս ՍՊԸ
2019 ԹՎԱԿԱՆ	**2019 ԹՎԱԿԱՆ**
1) Իզմիրլյան 2)Արաբկիր Բժշկական Համալիր ԵԴԱԻ ՍՊԸ 3) Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ	1) Իզմիրլյան 2) Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ 3) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ

4) Սլավմեդ ՍՊԸ 5) Մեդլայն կլինիկ ՍՊԸ 6) Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ 7)Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ 8) Դիագնոստիկա բժշկական միավորում ԲԲԸ 9) Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ 10) Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն 11) Ուլտրաիմիջինգ գիտամեթոդական կենտրոն ՍՊԸ 12) Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ 13) Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ 14) Արմամաքս ՍՊԸ 15) ԻռՎինգ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) 16) Շենգավիթ բժշկական կենտրոն ՓԲԸ 17) Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն ՓԲԸ 18) Վարդանանց նորարարական բժշկության կենտրոն **19) «ՄԻԲՍ»ՍՊԸ** 20) Ուիգմոր քլինիք ՓԲԸ 21) Սուրբ Մարիամ ՍՊԸ 22) Արտաշատի ԲԿ ՓԲԸ 23) Մաստեր ֆարմ ՍՊԸ 24) Աշտարակի բժշկական կենտրոն ՓԲԸ 25) Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ 26) Ախուրյանի մոր և մանկան ԱԿ հիմնադրամ 27) Վանաձորի բժշկական կենտրոն 28) Գորիսի բժշկական կենտրոն ՓԲԸ 29) Մարատ Ստեփանյան Ա/Ձ	4) Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն 5) Ուլտրաիմիջինգ գիտամեթոդական կենտրոն ՍՊԸ 6) Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ 7) Վ. Ավագյանի անվան բժշկական կենտրոն ՍՊԸ 8) Արմամաքս ՍՊԸ 9) ԻռՎինգ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) **10) ՄԻԲՍ ՍՊԸ** 11) ՄՌՏ էքսպերտ անդրկովկաս ՍՊԸ
2020 ԹՎԱԿԱՆ	**2020 ԹՎԱԿԱՆ**
1) Իզմիրլյան 2)Արաբկիր Բժշկական Համալիր ԵԴԱԻ ՍՊԸ 3) Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ 4) Սլավմեդ ՍՊԸ 5) Մեդլայն կլինիկ ՍՊԸ 6) Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ 7)Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ 8) Դիագնոստիկա բժշկական միավորում ԲԲԸ 9) Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ 10) Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն	1) Իզմիրլյան 2) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ 3) Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն 4) Ուլտրաիմիջինգ գիտամեթոդական կենտրոն ՍՊԸ 5) Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ 6) Վ. Ավագյանի անվան բժշկական կենտրոն ՍՊԸ 7) Արմամաքս ՍՊԸ **8) ՄԻԲՍ ՍՊԸ** 9) ՄՌՏ էքսպերտ անդրկովկաս ՍՊԸ

11) Ուլտրաիմիջինգ գիտամեթոդական կենտրոն ՍՊԸ 12) Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ 13) Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ 14) Արմամաքս ՍՊԸ 15) ԻռՎինգ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) 16) Շենգավիթ բժշկական կենտրոն ՓԲԸ 17) Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն ՓԲԸ 18) Վարդանանց նորարարական բժշկության կենտրոն **19) ՄԻԲՍ ՍՊԸ** 20) Ուիգմոր քլինիք ՓԲԸ 21) Սուրբ Մարիամ ՍՊԸ 22) Արտաշատի ԲԿ ՓԲԸ 23) Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ 24) Ախուրյանի մոր և մանկան ԱԿ հիմնադրամ 25) Վանաձորի բժշկական կենտրոն 26) Գորիսի բժշկական կենտրոն ՓԲԸ 27) Մարատ Ստեփանյան Ա/Ձ	

3) Ներկայացվել են ՀՀ առողջապահության նախարարի կողմից արձակված հրամանների պատճենները, որոնց արդյունքում ընկերության հետ կնքվել են համաձայնագրեր՝ հանգեցնելով պայմանագրային գնի ավելացման:

10. 2020 թվականի հոկտեմբերի 26-ին Հանձնաժողովն ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին առաջարկել է ներկայացնել գրավոր պարզաբանում՝ դրան կցելով իր փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

11. Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 31-ին կայացրել է թիվ Վ-04/2020 վարույթի ժամկետը 30 օրով երկարաձգելու մասին որոշում (մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը):

12. 2020 թվականի նոյեմբերի 2-ին Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ Վ-04/2020 վարույթը երկարաձգելու մասին որոշումն ուղարկել է Արսեն Թորոսյանին:

13. 2020 թվականի նոյեմբերի 13-ին Հանձնաժողովը «ՄԻԲՍ» ՍՊ ընկերությունից պահանջել է ներկայացնել քննարկվող հարցին առնչվող հավելյալ տեղեկատվություն:

14. 2020 թվականի նոյեմբերի 13-ին «ՄԻԲՍ» ՍՊ ընկերությունից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ ընկերության շահույթը երեք մասնակիցների միջև բաշխվել է 2013, 2015-2019 թվականներին: Ներկայացվել են

նաև Վարդանուշ Թևանյանի հետ 2018 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը, 2019 թվականի նրա աշխատավարձի փոփոխության վերաբերյալ ընկերության արտահերթ ժողովի արձանագրության պատճենները, ինչպես նաև պարգևավճարների տրամադրման հրամանները: Տրամադրվել են նաև 2015-2020 թվականներին անցկացված ընդհանուր ժողովների արձանագրությունների պատճենները:

15. 2020 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ՝ Ծաղիկ Վարդանյանը լսվել է որպես վկա:

ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ գործակալության հիմնական գործառույթն է պետական պատվերի (պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում) շրջանակներում բժշկական հաստատությունների կողմից ներկայացված պետական պատվերի հաշվետվությունների ուսումնասիրությունը և մոնիթորինգը, ինչպես նաև պետական պատվերի շրջանակներում համապատասխան ֆինանսական փոխհատուցման ընթացակարգերի կազմակերպումը: Գործակալությունն աշխատում է 465 կազմակերպությունների հետ: ՀՀ առողջապահության նախարարությունը պետական պատվերով պայմանագրեր կնքելու նպատակով 1-ին փուլում սահմանում է պետական պատվերի հայտի ձևերը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ծառայություններ մատուցող ընկերություններին ներկայացվող պահանջները և պայմանները, որից հետո պետական պատվեր տեղադրող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային տարբերակով տարածվում է գնումների հայտարարություն հայտերի ընդունման վերաբերյալ: Համապատասխան կարողություններ ունեցող կազմակերպությունները ներկայացնում են էլեկտրոնային դիմումներ: Հայտերն ուսումնասիրվում են անհատական սկզբունքով և վերլուծությամբ: Ներկայացված հայտերն ուսումնասիրվում են հանձնաժողովի կողմից, որի արդյունքում կայացվում է՝ «հայտը ամբողջությամբ բավարարելու», «հայտը ամբողջությամբ մերժելու» կամ «հայտը մասամբ բավարարելու» մասին եզրակացություն: Հայտերը քննարկելիս հանձնաժողովը հաշվի է առնում նաև տարածքային համաչափության սկզբունքը, ինչպես նաև որակի, հասանելիության և մատչելիություն սկզբունքները: Մեկ ծառայության համար կարող են ընտրվել մի քանի ընկերություններ: Հայտերը հաստատելուց հետո որոշվում է նաև ընկերությունների պայմանագրային գումարների չափը: Կազմակերպությունների պայմանագրային գումարները հիվանդանոցային բժշկական օգնության մասով որոշվում են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման՝ նախորդ տարվա ընթացքում փաստացի կատարված աշխատանքների ծավալ չունեցող և առաջին անգամ պետական պատվեր իրականացնող կազմակերպությունների համար՝ կանխատեսվող հիվանդների հաշվարկային թվաքանակի և մեկ հիվանդի բուժման միջին գնի արտադրյալով: Նույն

կազմակերպությունների՝ հաջորդող տարիների, ինչպես նաև նախորդ տարվա ընթացքում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցած կազմակերպությունների պայմանագրային գումարները հաշվարկվում են **նախորդ տարում փաստացի ֆինանսավորված գումարի, գների բարձրացման և դեպքերի ավելացման նպատակով նախատեսված գումարի հանրագումարով**: Արդյունքում կազմում են բժշկական ծառայությունների մատուցման պայմանագրեր, որը ստորագրվում է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի և ընտրված ընկերությունների լիազորված անձանց կողմից: Տարվա կտրվածքով կատարվում է նաև պետական պատվերի ներքին վերաբաշխում:

2014 թվականից «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության հետ կնքվել են համակարգչային տոմոգրաֆիա և միջուկամագնիսային-ռեզոնանսային տոմոգրաֆիա ծառայությունների մատուցման պայմանագրեր, նույն ժամանակահատվածում այդ ծառայությունների համար առողջապահության նախարարությունը կնքել է նաև պայմանագրեր այլ բժշկական հաստատությունների հետ: Բացի անհետաձգելի դեպքերից, բժշկական հաստատությունները համակարգչային տոմոգրաֆիա և միջուկամագնիսային-ռեզոնանսային տոմոգրաֆիա հետազոտությունները կատարում են շահառուի ընտրանքով՝ պետական պատվերի ուղեգրերի հիման վրա:

II. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստերը

16. «ՄԻԲՍ» ՍՊ ընկերությունը հիմնադրվել է 2011 թվականի ապրիլի 14-ին՝ Արսեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հիմնադրումից ի վեր ընկերության գործադիր մարմնի ղեկավար (տնօրեն) են հանդիսացել Արսեն Թորոսյանը և վերջինիս կինը՝ Վարդանուշ Թևանյանը: «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության հիմնադիրներն (մասնակիցներն) են ՌԴ քաղաքացիներ Ա.Ստոլպները, Վ.Եկիմովը և Ն.Բերեզինան: Ընկերության ստեղծումից ի վեր նրա մասնակիցների կազմը չի փոխվել: Ընկերության շահույթը բաշխվել է վերջիններիս միջև: Ընկերության մասնակիցներն ընկերությունում գործում են անձամբ՝ առանց լիազորված անձի: Ընկերության գործունեության հասցեն է ք.Երևան, Բագրատունյաց 1: Ընկերությունը վարձակալության պայմանագրի հիման վրա այդ տարածքը վարձակալում է «ԼԵԲԵՆ» ՍՊԸ-ից:

17. 2019 թվականին ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի երեք հրամաններով «Սոցիալապես անապահով և առանձին խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ենթամիջոցառման ծառայություններ իրականացրած համապատասխանաբար թվով 40, 12 և 32 բժշկական ընկերությունների հետ կնքվել են պայմանագրային փոփոխություններ,

որոնց արդյունքում նախնական պայմանագրային արժեքները ավելացել են՝ կազմելով ընդհանուր 432,541,000 ՀՀ դրամ:

18. 2020 թվականին ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի երեք հրամաններով «Սոցիալապես անապահով և առանձին խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ենթամիջոցառման ծառայություններ իրականացրած համապատասխանաբար թվով 27, 27 և 17 բժշկական ընկերությունների հետ կնքվել են պայմանագրային փոփոխություններ, որոնց արդյունքում նախնական պայմանագրային արժեքները ավելացել են՝ կազմելով ընդհանուր 425,601,000 ՀՀ դրամ:

19. ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի մայիսի 16-ի թիվ N 1253 - Ա հրամանով սահմանվել է պետության կողմից երաշխավորված անվճար սպասարկում իրականացնող կազմակերպությունների էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման վճարները փոխհատուցելու նպատակով սուբսիդիա ստացող կազմակերպությունների ցանկը և համամասնությունները: Մասնավորապես՝

1) Երևան քաղաքի 1 մլրդ ՀՀ դրամը գերազանցող շրջանառություն ունեցող բոլոր հիվանդանոցներին՝ 50%,

2) Երևանի քաղաքի 1 մլրդ ՀՀ դրամը չգերազանցող շրջանառություն ունեցող և մարզային բոլոր հիվանդանոցներին՝ 70%, սահմանամերձ և սահմանապահ հիվանդանոցներին, Երևանի և մարզային պոլիկլինիկաներին և գյուղական ամբուլատորիաներին՝ 100%: Ըստ նշված հրամանի՝ «ՄԻԲՍ» ընկերությանը էլեկտրոնային համակարգին միացման վճարների համար փոխհատուցվել է, համապատասխանաբար, 2019 թվականի համար դրանց ծախսերի կատարման 70% չափով, իսկ 2020 թվականի համար՝ 80% չափով: Սուբսիդիայի տրամադրման պայմանագրերը armeps.am կայքում գրանցված են որպես «մեկ անձից գնում»: 2018-2020 թվականներին սուբսիդիա տրամադրվել է 400-ից ավելի բժշկական կազմակերպությունների:

III. Շահերի բախման վերաբերյալ միջազգային չափորոշիչների և սահմանումների շրջանակը

20. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից սահմանված «Հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի» (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) համաձայն՝ (R(2000)10 Հանձնարարական, ընդունված 106-րդ նստաշրջանի ընթացքում 2000 թվականի մայիսի 11-ին, Հոդված 13) շահերի բախումն առաջանում է բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի մոտ առկա է անձնական այնպիսի շահ, որը կարող է ազդել կամ թվում է, թե կարող է ազդել պաշտոնատար անձի պաշտոնեական լիազորությունների անաչառ և օբյեկտիվ իրականացման վրա: Այս պարագայում անձնական շահը ենթադրում է առավելությունների կամ արտոնությունների ձևավորում իր անձի կամ իր

ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, ընկերների, անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ պաշտոնատար անձն առնչություն ունի:

Եվրոպայի խորհրդի կողմից մշակված «Հանրային կառավարման ոլորտում շահերի բախման կառավարման գործիքակազմ» (Եվրոպայի Խորհուրդ, Շահերի բախման կառավարումը հանրային ծառայությունում[1], 2019) փաստաթուղթը սահմանել է շահերի բախման հետևյալ տեսակները.

- Իրական/փաստացի,
- Հնարավոր/հավանական,
- Թվացյալ:

Փաստացի կամ իրական շահերի բախումը սահմանվում է որպես անցյալի կամ ներկայի այն իրավիճակը, որտեղ պաշտոնատար անձի մասնավոր շահը հակասում է պաշտոնեական պարտավորությունների իրականացմանը: Որպես օրինակ ներկայացվում է այն դեպքը, երբ պաշտոնատար անձի զավակը դիմում է նրա ղեկավարության տակ գտնվող պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Հնարավոր/հավանական շահերի բախումն այն իրավիճակն է, երբ պաշտոնատար անձն ունի այնպիսի անձնական շահ, որի առկայության պարագայում պաշտոնեական լիազորությունների/պարտավորությունների իրականացման արդյունքում կարող է դրսևորվել շահերի բախում: Օրինակ՝ համայնքի գլխավոր ճարտարապետի կինը ղեկավարում է կառուցապատող ընկերություն: Այն պարագայում, երբ նշված ընկերությունը մասնակցի տվյալ համայնքում կառուցապատման որևէ մրցույթի, պաշտոնատար անձն իր պաշտոնեական գործառույթներն իրականացնելու է շահերի բախման իրավիճակում: Քանի դեռ կնոջ ղեկավարած ընկերությունը չի մասնակցել տվյալ համայնքի կողմից հայտարարված կառուցապատման մրցույթի, շահերի բախումը հավանական է:

Թվացյալ շահերի բախումն այն իրավիճակն է, երբ օբյեկտիվ դիտողի մոտ տպավորություն է ձևավորվում, որ պաշտոնատար անձի մասնավոր շահը կարող է ազդեցություն ունենալ պաշտոնեական պարտականությունների իրականացման վրա: Օրինակ՝ պաշտոնը ստանձնելուն պես պաշտոնատար անձն օտարել է իր մասնավոր ընկերության բաժնեմասերը, և մի քանի ամիս անց պաշտոնատար անձն ի պաշտոնե պետք է քննի տվյալ մասնավոր ընկերության դիմումը:

21. Ոչ միայն Եվրոպայի Խորհրդի կողմից սահմանված Վարքագծի կանոնագիրքը, այլ նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) շահերի բախման հասկացության մեջ ընդգրկում են նաև հավանական և թվացյալ շահերի բախումը: Ըստ ՏՀԶԿ-ի մեկնաբանության՝

հավանական և թվացյալ շահերի բախումը ևս վտանգում է պաշտոնեական որոշումների անաչառության նկատմամբ հանրային վստահությունը: Պաշտոնատար անձինք որոշումների կայացման ժամանակ պետք է հաշվի առնեն նաև հանրային ընկալումները: ՏՀԶԿ-ն առաջարկում է, որ հավանական և թվացյալ շահերի բախման դեպքերը ևս պետք է բացառվեն, որպեսզի նվազեցվեն պաշտոնատար անձի համբավի առնչությամբ այն ռիսկերը, որոնք կարող են վնասել անձի/համակարգի բարեվարքությանը (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Հանրային ծառայությունում շահերի բախման կառավարում, գործիքակազմ 1):

IV. Շահերի բախման վերաբերյալ ներպետական օրենսդրական կարգավորումները

22. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա:

23. Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ բարեվարքության համակարգը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը:

24. Օրենքի «**Շահերի բախումը**» վերտառությամբ 33-րդ հոդվածի համաձայն՝

1.Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, **որը ողջամտորեն կարող է մեկնաբանվե**լ որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

2. Պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է **անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը** (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը **թեև ինքնին օրինական է,** սակայն **հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝**

1) **իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը**.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:

3. Պաշտոն զբաղեցնող անձը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա:

4. **Շահերի բախում առկա չէ, եթե անձնական շահը պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների պատշաճ իրականացման վրա ունի թվացյալ ազդեցություն, որը փաստացի բացակայում է:**

5. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց:

Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը **կարող է հանգեցնել շահերի** բախման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ: Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունն ստանալը անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց:

Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարը ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր:

Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարն իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու պաշտոն զբաղեցնող այլ անձի, եթե դա օրենքով արգելված չէ:

6. Սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա:

7. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող **անձի ամուսինը**, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները:

V. Հանձնաժողովի պարտճառաբանությունները և եզրահանգումները

25. Արսեն Թորոսյանի կողմից իր լիազորությունների շրջանակում կայացված որոշումների արդյունքում շահերի բախման դեպքի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրակացություն տալու համար, հաշվի առնելով նշված միջազգային ստանդարտները և Օրենքի կարգավորումները, անհրաժեշտ է պարզել, թե ՀՀ Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն իր լիազորությունների շրջանակում կատարե՞լ է արդյոք այնպիսի գործողություն կամ կայացրե՞լ է այնպիսի որոշում (հրաման), որը 1) թեև ինքնին օրինական է, 2) սակայն հանգեցնում կամ նպաստում է **կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը**:

26. Հանձնաժողովը արձանագրում է, որ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի՝ քննարկվող հարցին առնչվող հրամանների արդյունքում «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության հետ կնքվել են գույքային բնույթի գործարքներ:

27. Հանձնաժողովը գտնում է նաև, որ այդ գործարքները ողջամտորեն կարող էին նպաստել ընկերության շահույթի մեծացմանը, բարելավել ընկերության գույքային դրությունը (անկախ չափից), որը ողջամտորեն կարող էր նպաստել նաև տնօրենի եկամուտի ավելացմանը: Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում առկա են Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքները, այն է՝ պաշտոն զբաղեցնող անձը ընդունել է որոշում (հրաման), որը թեև ինքնին օրինական է, սակայն նպաստում է կամ **ողջամտորեն կարող է նպաստել իր հետ փոխկապակցված անձի գույքային դրության բարելավմանը:**

28. Այդուհանդերձ, Հանձնաժողովը փաստում է նաև, որ ՀՀ առողջապահության նախարարությունը «պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման» ծառայությունների մատուցման պայմանագրեր է կնքել ինչպես «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության, այնպես էլ այլ բժշկական հաստատությունների հետ, որոնք մատուցել են համակարգչային տոմոգրաֆիա և միջուկամագնիսային-ռեզոնանսային տոմոգրաֆիա ծառայություններ:

29. Այսինքն, Արսեն Թորոսյանի արձակած հրամանների արդյունքում նույն չափանիշներով և պահանջներով գույքային գործարքներ են կնքվել նաև այլ բժշկական կազմակերպությունների հետ, հետևաբար այդ հրամանները անդրադարձել են անձանց (բժշկական կազմակերպությունների) լայն շրջանակի վրա, ինչն Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հանդիսանում է **շահերի բախումը բացառող հանգամանք:** Այսինքն, նման դեպքում պաշտոն զբաղեցնող անձը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ **անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա:**

30. Նշված եզրահանգումը վերաբերելի է նաև ՀՀ առողջապահության նախարարության և «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության միջև 2019-2020 թվականներին

կնքված սուբսիդիայի հատկացման պայմանագրերին, որոնք անդրադարձել են թվով 426 կազմակերպությունների վրա:

31. Հանձնաժողովը, արձանագրում է նաև, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2019-2020 թվականների ընթացքում համակարգչային տոմոգրաֆիա և միջուկամագնիսային-ռեզոնանսային տոմոգրաֆիա ծառայությունների համար «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրերի արժեքն աճել է նույն ծառայությունների գծով այլ կազմակերպությունների պայմանագրային արժեքների փոփոխությունների հետ համամասնորեն:

32. Հանձնաժողովը կարևոր է համարում անդրադառնալ նաև Օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորմանը, համաձայն որի, եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը ***կարող է հանգեցնել շահերի բախման***, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին:

33. Կարևորելով հավանական կամ թվացյալ շահերի բախումը չեզոքացնելու, բացառելու համար ՀՀ առողջապահության քաղաքականություն մշակող անձի՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից ձեռնարկվող գործողությունները և դրանց նկատմամբ հանրային ընկալումը, հաշվի առնելով պաշտոնական որոշումների անաչառության նկատմամբ հանրային վստահությունը չվտանգելու կարևորությունը, Հանձնաժողովն արձանագրում է, որ Արսեն Թորոսյանը չի ձեռնարկվել Օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված գործողությունը՝ չի ներկայացրել գրավոր հայտարարություն հնարավոր շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը խաթարել է նախարարի կայացրած որոշումների նկատմամբ հանրային վստահությունը՝ հանգեցնելով սույն վարույթի հարուցմանը: ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի կողմից շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն տալու դեպքում կբացառվեր հանրային կասկածը և անվստահությունը՝ ապահովելով հրամանների օրինականության և գործընթացի համար թափանցիկություն:

Հանձնաժողովը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատելով գործով ձեռք բերված փաստերը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով,

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի կողմից արձակված հրամանների հիմքով ՀՀ առողջապահության նախարարության և «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության միջև 2019-2020 թվականներին կնքված պայմանագրերը և 2018-2020 թվականների պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրերը չեն հանգեցրել Արսեն Թորոսյանի մասնավոր և հանրային շահերի բախման, ուստի շահերի բախման դեպքը բացակայում է:
2. Եզրակացության մեկական օրինակ ուղարկել ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին և «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության լրագրող Դիանա Ղազարյանին:

Հանձնաժողովի անդամներ

Արամայիս Փաշինյան	Կողմ
Լիլիթ Ալեքսանյան	Կողմ
Նարեկ Համբարձումյան	Կողմ

Հանձնաժողովի նախագահ
Հայկուհի Հարությունյան Դեմ